

Թափված սնդիկի փոքր քանակությունների կառավարումը



Առողջության և անվտանգության ուղեցույց թափված սնդիկի ռիսկի նվազեցման մասին

Սնդիկը պարունակվում է բժշկական զանազան սարքավորումներում: Քանի որ այն ուժեղ նեյրոտոքսիկ է, հետևաբար, մեծ ուշադրություն պետք է դարձնել թափված սնդիկի ազդեցությունից մարդկանց պաշտպանելուն: Մեծ Բրիտանիայի Բուժական արտադրանքները կարգավորող գործակալության (MHRA) հանձնարարականի համաձայն՝ սնդիկի ազդեցությունը կանխելու համար, հնարավորության դեպքում, պետք է օգտագործել սնդիկից զերծ այլընտրանքային միջոցներ¹:

Այս ուղեցույցը նպատակ ունի օգնել հիվանդանոցներին՝ նվազագույնի հասցնել աշխատակիցների, հիվանդների և շրջակա միջավայրի վրա սնդիկի ազդեցությունը: Հանձնարարականներից ու հրահանգներից շատերը կարող են կիրառվել նաև դպրոցներում, գրասենյակներում և տներում: Այնուամենայնիվ, ստորև բերված միջոցառումները կարող են հիմնախնդրի ժամանակավոր լուծում համարվել: Սնդիկի ազդեցության վերացման լավագույն ելքը սնդիկ պարունակող սարքերից հրաժարումն է՝ ի օգուտ ավելի անվտանգ այլընտրանքների:

Սնդիկի նույնիսկ աննշան քանակությունը կարող է առաջացնել սնդիկային թունավորում, հատկապես՝ երեխաների մոտ: Բուժհիմնարկները պետք է դադարեցնեն սնդիկ պարունակող սարքերի օգտագործումն այնտեղ, որտեղ մատչելի են ավելի անվտանգ միջոցները: Հիվանդն իր հետ չպետք է տուն տանի սնդիկ պարունակող որևէ սարք, քանի որ այդ կերպ կավելանա սնդիկային աղտոտվածության վտանգը պակաս վերահսկվող միջավայրում, և ավելի մեծ թվով մարդիկ կենթարկվեն սնդիկով թունավորվելու վտանգին:

Սնդիկային թունավորման դեպքի նկարագրություն

1999թ. «Բրիթիշ Մեդիքլ Զորնըլ»-ում² տպագրվել էր 9-ամյա մի տղայի մասին, որը հիվանդանոց էր տեղափոխվել որովայնի շրջանում ցավի, փորկապության, լեթարգիական քնի, վերջույթներում ցավի և թուլության ախտանիշերով: Բժիշկները պարզել են, որ հիվանդանոց տեղափոխվելուց երեք ամիս առաջ հիվանդն իր ննջասենյակում քանդել է սֆիզմոմանոմետրը (պոլիսագրիչը): Դրա պատճառով սնդիկը թափվել է նրա անկողնում և կարպետի վրա: Նախքան մորն այդ մասին հայտնելը, երեխան 1-2 օր խաղացել է սնդիկի հետ: Ընտանիքի անդամները փորձել են փոշեկուլի օգնությամբ և նաև զուգարանակոնքի մեջ թափելով ազատվել սնդիկից:

Մասնագիտական (պրոֆեսիոնալ) հիվանդությունների բաժանմունքի աշխատակիցները երեխայի ննջասենյակի օդում և հատկապես՝ կարպետի վրա հայտնաբերել են սնդիկի բարձր խտություններ: Հիվանդանոցում բժիշկները կասկած են հայտնել սնդիկային թունավորման մասին, որը հաստատվել է արյան ստուգմամբ, ըստ որի՝ շիճուկում սնդիկի խտությունը եղել է 1000նմոլ/լ (nmol/l), մինչդեռ նորմալ չափը պակաս է 30նմոլ/լ-ից:

Երեխայի ապաքինումից զատ, ծնողները ստիպված են եղել փոշեկուլը, անկողնային պարագաները, կարպետները և հագուստները հանձնել համապատասխան մշակմամբ զբաղվող մարմնին: Բացի այդ, 3 ամիս շարունակ գործել է երեխայի ննջասենյակում տեղադրված հատուկ սարքը, որը կլանել է սնդիկի գոլորշիները:

Սնդիկի նույնիսկ փոքր քանակությունը կարող է առաջացնել սնդիկային թունավորում, հատկապես՝ երեխաների մոտ:

Պլանավորել, թե ինչպես կարելի է խուսափել սնդիկի ազդեցությունից

Կիրառելով սնդիկի անվտանգ կառավարման ընթացակարգերը, հնարավոր է կրճատել հիվանդների և բուժանձնակազմի վրա սնդիկի ավելորդ ազդեցության վտանգը: Այդ կերպ կնվազի նաև աղտոտվածությունը բուժփիննարկում, սնդիկը չի հայտնվի թափոններում և չի աղտոտի ձեր միջավայրը:

1. Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում

Տեղերում առողջության և անվտանգության ապահովման համար վճռորոշ նշանակություն ունի սնդիկի վտանգավորության մասին իրազեկումը: Հիվանդանոցների աշխատակիցների կարծիքով, բուժաշխատողների ուսուցման համար հատկապես օգտակար են պլակատները: Արդյունավետ են նաև տարեկան դասընթացները սնդիկի աղբյուրների, թափված սնդիկի կառավարման, հաստատությունում թափված սնդիկի հավաքման համար նախատեսված լրակազմ (կոմպլեկտ) ունենալու մասին: Դասընթացների կարևոր բաղադրամասերից է այլևս ոչ պիտանի կամ կոտրված սարքերից ազատվելու մեթոդների ներկայացումը:

2. Սնդիկ պարունակող սարքերի տեխնիկական ապասարկման անձնագրեր

Սնդիկ պարունակող սարքերը կարիք ունեն տեխնիկական զննման և պահպանման, օրինակ՝ պետք է կանոնավորապես ստուգել պոլիսագրիչների սանդղակը (կալիբրել): Սնդիկ պարունակող գործիքների հետ աշխատելիս հաճախակի երևույթ է սնդիկի թափվելը: Ահա թե ինչու, սկուտեղի վրա աշխատելը, կոյուղի չթափանցելու նպատակով դրենաժները ծածկելը շատ օգտակար են սնդիկի թափանցումը շրջակա միջավայր կանխելու համար:

3. Համապատասխան պիտակավորում և հավաքում

Բժշկական թափոնների մեջ սնդիկի թափանցումը կանխելու միջոցներից է որպես վտանգավոր թափոն պիտակավորումը, ամալգամների, կոտրված սնդիկային սարքավորումների և էլեմենտար սնդիկի հավաքումը հատուկ նշանակության արկղերում, որոնք պետք է տեղադրվեն բուժփիննարկի հատուկ նախատեսված վայրում, կամ հանձնվեն հատուկ վտանգավոր թափոններ ընդունող օբյեկտներին:

4. Թափված սնդիկի կառավարում³

Գոյություն ունեն հատուկ լրակազմեր թափված սնդիկի կառավարման համար: Դրանք մատչելի են, և յուրաքանչյուր բուժհաստատություն կարող է ունենալ 2-3 այդպիսի լրակազմ: Դրանցից կարող են օգտվել միայն վերապատրաստված աշխատակիցները: Ստորև ներկայացվում է լրակազմի պարունակությունը:

1. 4-5 կայծակ-ճարմանդով փակվող տոպրակներ
2. Թափոնների տոպրակներ (2-6 մմ հաստությամբ)
3. Պլաստիկ կոնտեյներ կափարիչով (օր.՝ 35 մմ ֆոտոժապավենի)
4. Նիտրիլից կամ լատեքսից ձեռնոցներ
5. Թղթ սրբիչներ
6. Ստվարաթղթի երիզներ
7. Աչքի կաթոցից կամ ներարկիչ (առանց ասեղի)
8. Դիմակ
9. Շատ նեղ խողովակ կամ կաշուն ժապավեն (30 սմ)
10. Գրպանի լապտեր
11. Փոշի ծծումբ կամ ցինկ (կարելի է վերցնել դեղատնից)
12. Թափոնների հավաքման և հեռացման մասին հրահանգներ:

5. Թափոնների հավաքման պլան

Սնդիկային թափոնի հավաքման պլանում պետք է շարադրված լինեն սնդիկի թափվելու դեպքում անհրաժեշտ ընթացակարգերը և աշխատակիցների պարտականությունները, ներառյալ՝ արագ արձագանքման ընթացակարգը: Շատ կարևոր է կանխել սնդիկի թափանցումը կենցաղային թափոնների մեջ: Սնդիկային թափոնը պետք է հեռացնել հատուկ կոնտեյներում, որը պետք է պիտակավորվի որպես խիստ վտանգավոր թափոն: Խորհուրդ է տրվում թափոններով զբաղվող տեղական մարմիններից կամ առողջապահության վարչությունից պարզել, թե որն է սնդիկային թափոնից ազատվելու լավագույն ելքը՝ ըստ տեղական օրենքների և արձանագրությունների:

6. Հեռացման մեթոդները

Համաձայն Եվրոմիության օրենսդրության, սնդիկը դասակարգվում է խիստ վտանգավոր թափոնների շարքին: Որոշ երկրներ մշակել են սնդիկի հավաքման և վերամշակման առանձին սխեմաներ: Հնարավորության դեպքում, սնդիկը պետք է օգտահանվի (ուտիլիզացվի), որպեսզի այնուհետև վերամշակվի: Ներկայումս սա ամենաանվտանգ լուծումն է, որով կկրճատվի շրջակա միջավայր թափանցող սնդիկի քանակը, և կնվազի սնդիկի նոր հումքի պահանջարկը: Բուժփիննարկները պետք է ունենան նախատեսված տարածքներ սնդիկային թափոնի համար: Կոտրված և/կամ սնդիկ պարունակող հին սարքերը պետք է տեղադրվեն առանձին կոնտեյներում՝ թափված սնդիկի մնացորդների հետ մեկտեղ: Տեղական բնապահպանական վարչությունը պետք է ի վիճակի լինի օգնել ձեզ՝ հեռացնելու սնդիկի թափոնը ձեր հաստատությունից:

7. Արտաքին կառավարման ռազմավարություն

Բուժփիննարկները կարող են բանակցել մատակարարների հետ, որպեսզի վերջիններս ետ վերցնեն օգտագործած և հնացած սնդիկային սարքավորումները, կամ պետք է դիմեն վերամշակող գործարաններին: Բանակցությունները կարող են տարվել նաև մատակարարների կողմից սնդիկից զերծ այլընտրանքների տրամադրման շուրջ, եթե դրանք մատչելի են:

Թափված սնդիկի մաքրման 11 քայլերը

Այս ուղեցույցը վերաբերում է թափված սնդիկի փոքր քանակություններին, օր.՝ ջերմաչափը կոտրվելիս: Ավելի խոշոր քանակությունների դեպքում պետք է անջատել տաքացուցիչները, ներսի օդափոխիչ համակարգը, բացել պատուհանները և տեղեկացնել այդ մասին առողջության և անվտանգության տեղական մարմին:

1. Էվակուացրեք տարածքը:

Մարդկանց տարհանեք աղտոտված տարածքից և փակեք դուռը: Անջատեք ներսի օդափոխիչ համակարգը՝ խուսափելու համար ողջ հաստատությունում սնդիկի գոլորշիների տարածումից:

2. Դիմքին դրեք դիմակ:

Դիմակ դրեք, որպեսզի խուսափեք սնդիկի գոլորշիները շնչելուց:

3. Հագեք հին հագուստ:

Փոխեք հագուստը և հագեք հին շորեր և կոշիկներ, որոնք աղտոտվելուց հետո պետք է հանձնել համապատասխան մշակմամբ զբաղվող մարմնին:

4. Հանեք զարդեղենը:

Ձեռքերի և դաստակների վրայից հեռացրեք զարդեղենը, քանի որ սնդիկը կարող է միանալ թանկարժեք մետաղների հետ (ամալգամել):

5. Հագեք ձեռնոցներ:

Հագեք ռետինե կամ լատեքսից ձեռնոցներ: Ձգուշույթամբ հավաքեք կոտրված ապակու կտորները կամ սուր առարկաները: Դրանք փաթաթեք թղթե սրբիչով և դրեք կայծակ-ճարմանդով տոպրակում: Պիտակավորեք տոպրակը՝ նշելով, որ այն պարունակում է սնդիկ:

6. Մշակեք մակերեսը:

Փայտյա, սալիկապատ մակերեսները, լինուլեումը և նմանատիպ այլ մակերեսները հեշտությամբ են մաքրվում, իսկ կարպետները, վարագույրները, փափուկ կահույքը՝ ոչ: Դրանք պետք է հանձնել համապատասխան մշակմամբ զբաղվող մարմնին (կարպետի դեպքում պետք է ախտահարված մասը կտրել և հեռացնել):

7. Որոշեք թափված սնդիկի տեղը:

Որոշեք թափված սնդիկի գտնվելու տեղը, ստվարաթղթի միջոցով փորձեք մոտեցնել իրար: Ձգուշացեք, որպեսզի սնդիկը պատահաբար չտարածվի: Փոքրիկ և հազիվ նկատելի գնդիկները կարելի է գտնել գրպանի լապտերի օգնությամբ՝ պահելով այն թեք անկյան տակ, հատակին մոտիկ, մթնեցրած սենյակում, և փնտրեք մնացած գնդիկները, որոնք կարող են կպած լինել մակերեսին կամ գտնվել մակերեսի փոքրիկ ճեղքերում: Սնդիկը զարմանալիորեն

արագ է տեղաշարժվում կոշտ և հարթ մակերեսների վրայով: Ուշադիր գնեք ամբողջ սենյակը:

8. Օգտագործեք աչքի կաթոցիչ կամ կաչուն ժապավեն:

Աչքի կաթոցիչով կամ ներարկիչով (առանց ասեղի) հավաքեք սնդիկի մնացորդները: Դանդաղ և զգուշորեն փոխադրեք դրանք չկոտրվող պլաստիկ կոնտեյնների մեջ, որն ունի ամուր փակվող կափարիչ: Կոնտեյնրը դրեք կայծակ-ճարմանդով տոպրակում: Վերջինս պիտակավորեք՝ նշելով, որ այն պարունակում է սնդիկով աղտոտված իրեր: Սնդիկի ավելի խոշոր մնացորդները հեռացնելուց հետո, կաչուն ժապավենով հավաքեք ավելի փոքր և հազիվ նկատելի գնդիկները: Կաչուն ժապավենը դրեք կայծակ-ճարմանդով տոպրակում և փակեք: Փոշի ծծումբը կամ ցինկը գունավորում է սնդիկը և դարձնում այն ավելի նկատելի: Ձգուշացեք այդ փոշին շնչելուց, այն կարող է թեթևակի թունավոր լինել:

9. Օգտագործեք չարտահոսող տոպրակ:

Մաքրելու ժամանակ օգտագործած բոլոր նյութերը, ներառյալ՝ ձեռնոցները, դրեք չարտահոսող տոպրակում կամ կոնտեյնրում: Փակեք այն և պիտակավորեք:

10. Վերջնականապես հեռացրեք թափոնը:

Դիմեք հիվանդանոցի ղեկավարին, որը պատասխանատու է տոքսիկ նյութերի մաքրման և պատշաճ հեռացման համար՝ հավաստիանալու համար, որ սնդիկով աղտոտված թափոնը հավաքելիս և պիտակավորված տոպրակում տեղադրելիս, գործել էք համաձայն ազգային և Եվրոմիության օրենսդրության:

11. Կատարեք արտաքին օդափոխություն:

Սենյակը հաջողությամբ մաքրելուց հետո, ամենաքիչը 24 ժամ օդափոխեք ախտահարված տարածքը (բաց պահելով պատուհանները և միացրած թողնելով օդափոխիչ համակարգը): Վատ ինքնազգացողության դեպքում՝ անմիջապես դիմեք բժշկի օգնությանը:

Մի օգտագործեք փոշեկուլ՝ թափված սնդիկը մաքրելու համար:

6 բան, որ չի կարելի անել

1. Երբեք մի օգտագործեք փոշեկուլ՝ սնդիկը մաքրելու համար: Փոշեկուլը կնպաստի սնդիկի գոլորշացմանը և կտրուկ կմեծացնի տարածքի վրա սնդիկի ազդեցությունը:
2. Երբեք մի օգտագործեք ավել՝ սնդիկը մաքրելու նպատակով: Ավելը կմանրացնի սնդիկի գնդիկները և շաղ կտա՝ դժվարացնելով տարածքի ախտահանումը:
3. Երբեք մի թափեք սնդիկը կոյուղու խողովակի մեջ, այն կարող է ընկնել ջրատարը, աղտոտել սեպտիկ տարան և աղտոտել կեղտաջրերի մշակման կայանի նստվածքը:
4. Երբեք մի լվացեք սնդիկով աղտոտված իրերը լվացքի մեքենայում: Սնդիկը կախտահարի լվացքի մեքենան և կոյուղու համակարգը:
5. Երբեք մի շարունակեք կրել այն հագուստը և կոշիկները, որոնք աղտոտված են եղել:
6. Երբեք մի այրեք սնդիկով աղտոտված կոշիկները, հագուստը, գործվածքը և այլն:
Դա կնպաստի սնդիկի թափանցմանը մթնոլորտ:

Resources

Mercury Spill Cleanup Kit.

HCWH factsheet. January 2006. For Global South Countries.
www.noharm.org/details.cfm?type=document&ID=1280

The US Environmental Protection Agency's Clean Up Instructions:

www.epa.gov/epaoswer/hazwaste/mercury/spills.htm

Environment Canada's Cleaning Up Small Mercury Spills:

www.ec.gc.ca/MERCURY/EN/cu.cfm

References

1. MHRA UK (2005) Report of the Independent Advisory Group on Blood Pressure Measurement in Clinical Practice. June 2005. p
2. A C Rennie, M McGregor-Schuerman, I M dale, C Robinson, R McWilliam poisoning after spillage at home from a sphygmomanometer on loan from hospital. British medical Journal. August 7, 1999.
3. Adapted by HCWH from United States Environmental Protection Agency's Guidelines on cleaning up mercury spills. See more at www.epa.gov/mercury/disposal.htm

Թարգմանվել և հրատարակվել է «Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» (HCWH) կազմակերպության և Եվրոմիության ֆինանսավորմամբ:



HCWH Europe
Chlumova 17, 130 00
Praha 3, Czech Republic
Phone/Fax: +420 222 782 808
Email: europa@hcwh.org
www.noharm.org



Health and Environment Alliance (HEAL)*
28 Blvd Charlemagne, B 1000
Brussels, Belgium
Phone: +32 2 234 3640
Fax: +32 2 234 3649
E-mail: info@env-health.org
www.env-health.org



«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հկ 375019 Երևան, ՀՀ
Մարշալ Բաղդամյան 24դ, գրասենյակ 609
Հեռ. 52 36 04
Ֆաքս. (+37410) 52 36 04
Էլ. փոստ: office@awhhe.am
www.awhhe.am

«Մնացեք առողջ, դադարեցրեք սնդիկի օգտագործումը» քարոզարշավը «Առողջության և շրջակա միջավայրի միությունը» (HEAL), «Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» (HCWH) և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (AWHHE) կազմակերպությունները միավորում են իրենց ջանքերը, որպեսզի մոբիլիզացնեն Եվրոպայի առողջապահական հաստատությունները՝ սնդիկի գործածության վրա համընդհանուր արգելք դնելու նպատակով: Գործունեությունն ուղղված է առողջության, հատկապես՝ երեխաների և հղի կանանց առողջության վտանգների մասին իրազեկության բարձրացմանը, ինչպես նաև բացատրական աշխատանքներին, թե ինչպես կարող են կանայք և բուժիմնարկների մասնագետները պաշտպանել իրենց և իրենց շրջակա միջավայրը սնդիկի ազդեցությունից:

